Կարգապահական գործ թիվ ԿԳ-18020

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 205-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/153-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Ատուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարդարյանի կազմով

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Հայկուհի Հարությունյանին (արտոնագիր թիվ 1042) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ-ին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Հայկուհի Հարությունյանը (արտոնագիր թիվ 1185) 2015թ. նոյեմբերից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 135.000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 27.02.2018թ. թիվ 74-Ա/ԿԳ-18020 որոշմամբ փաստաբան Հայկուհի Հարությունյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին

մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-18020):

Սույն կարգապահական գործը 05.03.2018թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի օգոստոսի 11-ին ժամը 10:42-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Հայկուհի Հարությունյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբան Հայկուհի Հարությունյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) Փաստաբան Հայկուհի Հարությունյանը ունի 135.000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2015թ. նոյեմբերից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 23.02.2018թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Հայկուհի Հարությունյանը 2015թ. նոյեմբերից մինչև 2018թ. հունվար (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 135.000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 10.08.2018թ.տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի տեղեկանքի համաձայն՝ Հայկուհի Հարությունյանը փաստաբանական գործունեության թիվ 1042 արտոնագիրը ստացել է 16.10.2010թ.: Հայկուհի Հարությունյանի նկատմամբ 2013-2018թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

6. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայկուհի Հարությունյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք**) 17-րդ հոդվածի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:*

Կարգի 17-րդ կետի՝ *«Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:*

Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- ✓ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ և

- ✓ մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Սույն դեպքում համաձայն 10.08.2018թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի տեղեկանքի Հայկուհի Հարությունյանը իր անդամավճարի պարտքը մարել է:

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքից հետևում է, որ փաստաբան Հայկուհի Հարությունյանի նկատմամբ նախկինում չի կիրառվել Կարգի 17-րդ կետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հայկուհի Հարությունյանի (արտոնագիր թիվ 1042) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հայկուհի Հարությունյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/153-Ա
ք. Երևան